

ԾԱԳՈՒՄՆ ԴԱՒԻԹ-ԲԷԿԻ

(Հատուած Մովսէս քահանայ Մելիք-Ստեփանեանցի յիշատակարանից)

Խմբագիր՝ ր Տէր ,

Անմահ Րաֆֆին իր «Դաւիթ-բէկ» վէպի մէջ խօսելով իր գլխաւոր հերոսի մասին , նորա ծագումը թողնում է անյայտ : Վիպասանը , այդ մասին մեր ազգային պատմութեան մէջ ոչ մի յիշատակութիւն չը գրանցելով , միայն ասում է , որ կրակի ու բոցի միջին այրւող Տաթեւացիներէից մի մանուկ Դաւիթ անունով ազատւում է մահից եւ ուղարկւում Վրաստան : Իսկ թէ ո՞վ էր Դաւիթը , ո՞վ էր նորա հայրը — այդ մասին մինչեւ օրս էլ մեր պատմութիւնը լռութիւն է պահպանում : Այսօր ուրախութեամբ ներկայացնում եմ Խմբագրութեանդ իմ ժողոված նոր պատմական յիշատակութիւններից մի հատուած , որը միանգամայն լոյս է սփռում Դաւիթ-բէկի ծագման վերայ : Դաւիթ-բէկի ծագման եւ առհասարակ նորա գործունէութեան յիշատակարանը գրել է Հալիձոր (Ղափանու գաւառ) գիւղից մի ծերունի քահանայ՝ Տէր-Մովսէս Մելիք-Ստեփանեանց , որ ներկայումս ապրում է Գողթան գաւառի Ագուլիս աւանում : Տէր-հայրը , ինչպէս ինքը վկայում է իր յիշատակարանի մէջ , իր տեղեկութիւնները քաղել է այն «ձեռագիրներից եւ հին դապալաներից , որոնք պահւել են վասն ազգային օգտի» Մելիք-Ստեփանեանների սերունդի մէջ :

II/X 1902

Խորին յարգանք՝ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑ

Թիֆլիս

• •

Հայկազունք բաժանեցին իւրեանց սեփական հողն : Երկիր Սիւնեաց , որոյ իսկական անունն է Սիսական աշխարհ : Գեղամայ ծովն եւ իւր շրջակայս էր բաժին Վասակայ : Դարալակեազ , որ անուանուեցաւ Վայոց ձոր : Սիսեան , Զանգեազօր՝ բաժին Բաբգէնի , Փիլիպպէի , Տարշայիճի եւ ժառանգաց նոցա : Իսկ 'ի Փոքր Սիւնիս , այն է՝ Գողթն , Ղափան , Բարկուշատ , Աջանան (Բաղք գաւառ) — բաժին Գաղիկ իշխանի , որոյ որդին էր Զիւանշէր իշխանն Սիւնեաց : 'ի սոցանէ սերեալք որդիք 'ի հարց , ոմանք թագաւորք , ոմանք նախարարք՝ գալով հասեալ մինչեւ Առաջին Մելիք-Փարսաղանն , որ ունէր երիս որդիս՝ Մելիք-Սափրազ , իշխանն Աստուածատուր եւ Ստեփաննոս : Երկրորդ Փարսա-

դան էր որդի Սափրազի, Դաւիթ-բէկ էր որդի Աստուածատուր իշխանի. Շահում, որոյ մականունն էր Շիկօ, էր որդի Մելիք-Ստեփաննոսի:

Մելիք-Սափրազը իւր հօր Մելիք-Փարսաղանին չէր հնազանդուում եւ ցանկանում էր գրաւել Մելիք-Նուբարեանցի երկու բերդերն: Առաջին Մելիք-Փարսաղանն իւր քոյրը տալով Մելիք-Նուբարի հօր Վարդիկին, նոյն բերդերը ընծայել էր նմա, այն է՝ Բերդաքար եւ Կոնասու բերդն: Եւ Վարդիկին կարգել էր իբր իւր հաւատարիմ հարիւրապետ, եւ իւր երկրի արեւելեան հարաւակողմն յանձնել էր նմա պահպանել ասպատակից: Բայց Մելիք-Սափրազն, քանիցս պատերազմելով ընդ նմա, յիշեալ բերդերը յետ պահանջել չը կարողացաւ, որովհետեւ հայրը յայտնի պահպանում էր Վարդիկին: Վասնորոյ Մելիք-Սափրազը հօր վերայ ճկոված (1)՝ գնում է Տաճկաստան: Յետ մի տարոյ լսում են, որ Մելիք-Սափրազը սուլթանի մօտ շատ համարձակ է եւ սուլթանը պատուում է նորան, իբր մի արքայաժառանգի, եւ ասում են՝ զօրք է բերում յիշեալ բերդերը տիրապետելոյ: Այս լուրը Մելիք-Փարսաղանը լսելով, կանչում է իւր թոռան՝ Շահումին, ասում է. «Շիկօ՛, մի նամակ գրի՛ր մեր Սափրազին, ասի՛ր հայրդ ծերացել է, ե՛կ երկիրդ տիրապետի՛ր, եւ այդ համարձակութիւնը չ'անես, որ դու չ'ընկնես Սիւնեաց նորահաս արծիւների ձեռքը (այս իւր թոռանցն է ասում)»: Այս նամակը նա ստանալուց, պատասխանում է. «Ես իմ հայրենեաց միտս չեմ հասցնիլ, բայց զգոյշ կացէք թուլամորթ եւ անտոհմ արանց, որոնց իշխում էք, բերդ էլ յանձնում. եթէ ոչ ես այնքան տմարդի չեմ, որ Տաճկաց զօրք հանեմ իմ հայրենեաց վերայ, եւ ես այստեղ զօրավար եմ կարգել, իմ գալս անկարելի է:» Դաւիթ-բէկը այդ նամակը կարդալով եւ իմանալով, որ Մելիք-Սափրազը էլ չի գալու, ինքըն պատկից դժկամած՝ գնում է Վրաստուն

Ճիւղագրութիւն Մելիք-Փարսաղանեանցի ընդ բաժանեալ սերնդոց

Մելիք-Փարսաղան

Սափրազ	Աստուածատուր իշխան	Մելիք-Ստեփաննոս
Փարսաղան II	Դաւիթ-բէկ (2)	Մելիք-Շիկօ կամ Շահում
Բալի զօրավար		Մելիք-Ստեփաննոս II
Էյվազ-բէկ		Օհան իւզբաշի I
Փարսաղան III		Մելիք-Ղուկաս
Յովհաննէս		Մելիք-Օհանջան II
Գալուստ		Մելիք-Ստեփան III
		Մելիք-Սողոմոն

(1) Բարկացած. — (2) Սա չէր պսակեալ, վասնորոյ ժառանգ չ'ուներ. Մելիք-Փարսաղանը աշխատեց պսակելոյ, ասաց. «Իմ պսակը իմ հայրենեաց պահպանելն է» . չը յօժարուեց: